

ուրիշ տեղ ըսինք, այլ իրական և շա-
րունակեալ գործածութենէ իշխանու-
թեան. մաս մ'օրինաւոր և մաս մ'ա-
պօրինաւոր վարիչք զօրագոյն իշխա-
նութեան մը, զոր շատ անգամ շանա-
ցին կործանել ազքատ և 'ի պատուոյ և
յիշխանութենէ հնգի ազնուականք և
Երրորդ և պատուաւոր դասերուն մէջ
եղած հակառակութիւնն, որ ուրիշ
սեղեր կ'արծարծէր, վնեւտկոյ մէջ
ալ սկսեւ էր, բայց Մեծագոյն ժողովոյ
դահլճին մէջ, ընդ մէջ հարուստ և աղ-
քատ ազնուականաց, նոր սա'սուպե-
տութեան և հին ազնուապետութեան:
Սակայն պէտք չէ կարծել որ ամեն աղ-
քատք մէկ կողմ կ'ըլլային և ամեն հա-
րուստք միւս կողմ. ինչպէս միշտ՝ ու-
մանք յաղքատաց շահու համար հա-
րուստներուն հետ կը միանային. հա-
րուստներէն ոմանք փառասիրութեան
ոգւով՝ աղքատաց հետ: Բայց ոմանք
յանուն բարեկարգութեան և օրինաց՝
կ'ուզէին իշխանութիւնին պահել.
այլք՝ յանուն ազատութեան և յառա-
ջագիծութեան՝ այնմ հասնիլ կը փափա-
քէին: Հին ընդդիմակութիւնք որ միշտ
կը վերանորոգուին, վասն զի իրաց ա-
նուանքն կը փոխուին, այլ մարդկանց

կիրքն կը տեսն: Սակայն կարծելու չէ
թէ ժողովուրդն անզգայ հանդիսատես
եղաւ Ռէնիէր Դէնոյի, Անճէլոյ Քուի-
րինիի, Գեորգ Բիզանիի անուանի ար-
կածներուն, և Տասանց ժողովոյն ա-
պագայ կարգադրութեանց (1628-
1762), ինչպէս նաև ուղղութեանց և
բարեկարգութեանց 1773 և 1780 տա-
րիներուն: Ճշմարիտն ըսելով, ժողո-
վըրդեան վրայ խօսք չէր ըլլար. վասն զի
որչափ ալ յուզիչներն ժողովրդեան և
ազատութեան փառաւոր անուանքը ըս-
տէպ բերաննուն մէջ ունէին, գլխաւո-
րապէս իրենց շահը ձեռք բերել կը ջա-
նային: Բայց այս անձնական փառա-
սիրութեան կռուոյն մէջ, ժողովուրդն
մոռածեց որ իրեն աւելի շահաւոր էր
հաստատեալ կարգաց պահպանու-
թիւնն, որոնց միջոյաւ գէթ բռնակա-
լութիւնք կը զսպուէին: Եթէ առան-
ձնական փառասիրութեանց առջևէն
արդեւք վերնային՝ ինչ պիտի ըլլար աղ-
քատ ազնուապետութեան վիճակն,
որ պաշտամանց և հարստութեանց
կ'անձկար: Վերջապէս ժողովուրդն իր
ուրախութիւնը յայտնեց, երբ իմացաւ
որ հին կարգադրութիւնք կը վերանու-
րոգուէին՝ այլ չէին ջնջուեր:

Կը շարունակուի:

Ք Ա Պ Ո Ւ Լ

Քապուլ մեծաւ մասամբ համանուն
գետին հարաւային ափանցը վրայ կը
տարածուի: Պապէր (Հնդկաստանի Մու-
ղոյ կայսրութեան հիմնադիրն, մեռեալ
1530ն) թագաւորին ժամանակէն սկը-
սեալ՝ ուր իրեն սրտահաճոյ թիւուա-
նիստն ըրաւ, Քապուլ Աֆղանաց հա-
մար յատուկ սիրելի տեղ մ'եղաւ. սա-
կայն թիմուր Շահի թագաւորութեան
ատենը մայրաքաղաք անուանեցաւ, որ
մեծին Ահմէտի որդին էր (Ահմէտ Շահ
Ապտալահ, առաջին աֆղան ինքնա-
կալն ուրդի Աֆղանաշահին, Սահնոսիս
ազգատոհմին հիմնադիրն, մեռեալ
1773ն): Թիմուր՝ Քանտահարէն փա-

խեց աթոռը 'ի Քապուլ. այս փոփո-
խութեանս պատճառն՝ գիղեցիկ զրից
հրապուրանքն պէտք է համարիլ, ու-
րով Քապուլ բնակութեան յարմար
տեղ մը կ'ընծայէր, ինչ պատճառաւ որ
Պապէր՝ Քապուլի նախագահ համարել
տուաւ զՏէլհի, նոյնը՝ համոզեց զթա-
փառաշրջիկ թիմուրն թողուլ զՔանտա-
հար, Քապուլի սիրոյն համար:

Պապէր, իր յիշատակարանին մէջ գրեց
յետագայ գովեստս իր ընտրած քաղա-
քին բարեմասնութեանց վրայ, և յե-
տոյ Մոնղոլ թագաւորին յանձնարա-
րութիւնքն դարձան 'ի նպատա քա-
պուլի:

« Եկիման կարգէ դուրս ախորժելի է, և բնաւ տեղ մը չկայ աշխարհիս մէջ որ կարենայ բաղդատուիլ այս քաղաքիս հետ, վասն զի գարնան Ժամանակն կանանչութիւնն և գեղատեսիլ ծաղկունքն՝ ճշմարտապէս դրսխտին եւ բնոյթն կու տան ֆապուլի :

« Բմպեցէք զգինի ֆապուլ քաղաքի կին մէջ, և անդադար ձեռքէ ձեռք անցուցէք զբմպանակն, վասն զի լեռներ և գետակներ, քաղաքք և անապատք միանգամայն կը դտնուին ֆապուլի մէջ » :

Կարևոր է ըսել, կլիմայի վրայ խօսելով, թէ սովորաբար ձիւնն կը ծածկէ ֆապուլի մերձակայ բլուրներն հոկտեմբերի սկիզբէն, բայց դուրսն տեղերն գեկտեմբերէն առաջ չիջնար : Փետրուարի կէսին կը սկսին հալիլ, Հոգիւ թէ ձիւններն կը հալին, անձինի եղանակն կը սկսի, և ընդհանրապէս մինչև ապրիլ կը տևէ : Տարւոյն միւս եղանակներուն մէջ չորութիւնն կը տիրէ : Դարձեալ պէտք է դիտնալ, թէ ֆապուլ 6247 ոտք ծովու երեսէն բարձր գիւրք մ'ունի :

Ֆապուլի հիմնարկութեան սկիզբը միտկութեան մէջ կ'ընկղմի : Ֆաղաքն իր աւանդութիւններն ունի և շատ հին կը կարծէ : Մինչև 'ի վէց հազար տարի կը հասցնեն, Բայց ինչպէս ըսինք, հազիւ հարիւր տարի կայ որ մայրաքաղաք եղաւ : Կը կարծուի թէ տասը դար առաջ հարկատու էր Պամիսնի, որոյ աւերակները մնացած են, և իր հսկայաձև կուռքերն և դրոշմագիր անձաներն վկայ են իր անցեալ փառաւորութեանց : Սակայն յետ Պամիսնի կործանմանն 'ի Մոնղոլ կայսերաց, ֆապուլ իր մերձակայ կաղաւթներուն մեծ մասով՝ Պարսից Շահին՝ Մահմուտ Ղազնի հռչակաւոր աշխարհակալին ձեռքն ինկաւ, որ արևելեան Մեծն Կարոլոս ըստած է :

Երբ Ղազնեսան տոհմն ինկաւ, ֆապուլ՝ Ղոր տանը անցաւ : և վերոյի չեալ Պապէրի՝ Հնդկաստանի տիրելէն վերջն, Տէշէրի կայսերաց ամառատուն

մ'եղաւ : որ յետոյ Պարսից Նատիր երկրակալին անցաւ : զկնի տիրեցին վերի յիշած Աֆգան իշխաններն՝ Ահմետ Թիմուր և իրենց յաջորդներն, ապա հիւսնիւսի Պարոքայ կամ Պարաքսիս ցեղապետութիւնն :

Թուրք այս պատմական յիշատակութիւնքը ֆապուլ իր վաճառաշահութեամբն ուշադրութեան արժանաւոր քաղաք մ'է : Սիր Ալեքսանդր Պրոնէս (1841ին Անգղիոյ գեսպանն) կը գրուցէր, թէ շատ բանուկ վաճառաշահութիւն ունի, և կը հաստատէր՝ թէ փողցներու աղաղակի սաստկութիւնն կը խափանէր իր ձայնն մօտակայ անձանց լսելի ըլլալու : Վաճառականութեան զըխաւոր նիւթերն պտուղներ են և Հընդկաստանի ապրանք : Ամեն վաճառ իր յազարն ունի, և կայ նաև մեծ հասարակաց քաղաքն որ կ'ըսուի Գուշա կամ Ծար-Գուշ, որ բոլոր քաղքին համար է :

Այս տեղ գտնուած ամենէն հետաքրքրական բաներն հասարակաց խահակերոցներն են, որք շատ բաղմալիւ են, վասն զի սակաւ անձինք ֆապուլի մէջ իրենց տուններն կերակուր կ'եփեն : Ֆապուլս կամ ֆապուլի եփեալ ըմպելիքն նշանաւոր են, որք են պտուղ, անուշք, զովորար օշարակք : և սակաւ դրամով բնակութիւն կը գտնուի : Ժողովորդը մօտ 60,000 բնակչաց կը հասնի : ֆապուլի պարտէզներն շատ անուանի են իրենց գեղեցկութեամբը, մասնաւոր յիշատակութեան արժանի է Թիմուր ըստած պարտէզն, որ քաղաքացւոց սիրած ճնմելեաց տեղն է :

Պրոնէս և այլ ճանապարհորդք, խօսեցան այն գեղեցիկ տեսարանին վրայ, որ 20 մղոն քաղքին աշտարակներէն և մերձակայ բլուրներուն վրայ կը զուարճացնէ զտեսողն :

Քաղաքն չրջապատող պարիսպն շատ փնտսուած է : ֆապուլի՝ յարձակման մը դէմ պաշտպանութիւն ընելու յարմարն՝ Պալա Հիսարն է, և ճշմարիտն ըսելով, այս ևս շատ ամուր չէ :

Պալա Հիսար պալատն հիմնարկութիւնն Պապերի կ'ընծայեն : սակայն իր

յաջորդներն շատ բան աւելցուցին : Գաղաքին արևելեան կողմն բլրան մը վրայ շինուած է Պալա Հիսար . իր մեծամեծ պարիսպներովն և կամարակապ շէնքերովն , շատ հեռուէն մարդուս աչքը կը զօշոտէ և բոլոր քաղքին վրայ կը տիրէ . Պալա Հիսար երկու մասն կը բաժնուի . ներքնաբերդ մը և արտաքին պարիսպն : Հաւանօրէն ոյս փոքրիկ միջնաբերդիս մէջ ապաւինեցաւ Եսգուր-Խանն : Իսկ արտաքին պարիսպն բաւական ընդարձակ է և կրնայ տանիւ 5,000 մարդիկ : Սա միշտ իբրև թագաւորական պալատ համարուեցաւ , վասն զի բաւականապէս ամուր է և խառնիճաղանճ ժողովրդեան խռովութեան մը դէմ կրնայ դնել , և շատ յարմար է իբր պատասպարութեան տեղ էմիրներու յանկարծակի շփոթութեց ժամանակ :

Քապուլ գետին վրայ երեք կամ չորս կամուրջ կայ , յորոց մին Ռէզլիպաշիսնե .

րուն թաղին միջավայրը կը գտնուի , որ ազդով սլարսիկ են , և առանձին թաղ մը կը բնակին , և շատ գործունեայ ու Անգղիացուց բարեկամ : Քապուլի մէջ կան նաև բազմաթիւ Հնդիկք , բայց ժողովրդեան մեծագոյն մասնը բնիկ ազգային Աֆղաններէ կը կազմուի , Գապուլնաւ ըսուած ցեղէն : Քապուլ է անտարակոյս , Պուխարայէն ետըր , Ասիոյ քաղաք մը՝ յորում առաւելապէս ուժի մէջ է մուսուլմանական մոլեռանդութիւնն : Մոլլայքն անթիւ են և զօրաւորք , և կան նաև շատ մը տէրվիշներ : Ուստի Քապուլ րուն մայրաքաղաք մ'է . բայց իր վաճառաշահութեան պատճառաւ , Ասիոյ այլ և այլ կողմերու ճանապարհորդաց Քապուլ յաճախեն , իր բնակչաց բնական բարուցը վրայ ամենևին փոփոխութիւն չի գործեցին : Տեսնենք Անգղիացուց պատերազմն ինչ վիճակ պիտի տայ այս քաղաքիս :

ՖԻԼՈՓՍԵՐԱ

ՈՐԴՆ ԱՊԱԿԱՆ ԱՐԱՐ ԱՅԳԵԱՅ

Նոր աշխարհքն այլ և այլ բարեաց հետ՝ այս վերջի տարիներս ընծայեց հնոյն այնպիսի ֆլատուկար պարգև մը որ մեծամեծ աւերմուիք կը սպառնայ այգեւէտ երկիրներուն , մանաւանդ Գաղղիոյ . անոր համար մեծամեծ վարձք խոստացած է Գաղղիա այս ֆլատուս գեղը գտնողին (500,000 ֆռ .) . բայց զժբաղդաբար դեռ ևս մէկն ալ չյաջողեցաւ . ուրիշ տեղեր ալ սկսաւ տարածուիլ այս ֆլատուս , ինչպէս յիտալիա , 'ի Զուլիբերի , և այլն , և մեծ երկիւղ ազդեց կալուածատէրաց : Եւ ո՞վ է այս մեծամեծ ֆլատուց պատճառն , որ այնչափ վախ կու տայ այգեգործին , և կ'ընդդիմանայ ամեն հնաւից և դարմանի , զորս զիտութիւնը կը մատակարարէ : Ամենամանր որդ մ'է , զոր վարժ աչք

հազիւ կրնան առանց մանրացուցի տեսնել :

Այս չնչին տրարածոց բազմութիւնն է՝ քան թէ մեծութիւնը , անոնց զարհուրելի կերպով աճումը՝ քան թէ ուրիշ բան՝ որ կը պատերազմի ընդդէմի բաւանց մահու , և այն զինուոյ՝ զոր զիտութիւնը կը մատուցանէ երկրագործաց : Էգ մը միայն քիչ ամսուան մէջ կրնայ քանի մը միլիարտ Ֆիլոքսերաներու մամ ըլլալ , Բնդնաւորութիւն զարհուրելի և զարմանալի . իրացընէ տկար մտաց երազ կը կարծուի , և սակայն ճմարտութիւն է , և ցաւալի ճշմարտութիւն : Եւ որպէս զի աւելի լաւ բժշկանքն այս պղտի հրէշը , զոր նոր աշխարհքն ակամայ ընծայեց հնոյն , տեսնենք կարգ ըստ կարգի անոր այլա .